



Վահան Թորոպենց

Ստովերները

Գեղեցկությունները ծածկված են ստովերներով. ստվեր կա կյանքի ամեն երևույթի վրա:

Արշալույսները ստովերներու ծոցեն կպատռին, ինչպես շուշանները՝ կոկոններեն:

Սրտերը կծկված են թանձր ստովերներու տակ, ինչպես երագող աչքերը, որոնք գոցված են, բայց կտեսնեն:

Կյանքը շատ տափակ և կյանքի երգը շատ գռեհիկ պիտի ըլլար, եթե ստովերներու խորհուրդը չըլլար: Լեռները, անտառները այնքան հավիտենական և աստվածային չպիտի ըլլային, եթե մեծության ստվերը չըլլար անոնց վրա:

Ահավասիկ ոսկեսափորը ուներին՝ հարսներ, որոնք դեպի արշալույսը կքալեն, անոնք երկրպագելի չպիտի ըլլային, եթե համեստության ստվերը չծածկեր անոնց կուրծքերը, եթե ոչ՝ անոնց վարդակարմիր ժպիտը պիտի ըլլար փրփուրը զգվանքի և ատելության:

Միայն մահը ստվեր չունի: Մթությունը ստվեր չունի: Մահը ինքնին ստվերն է կյանքին:

Ստվեր կա հանճարի ճակատին, ստվեր կա մանկան անբծության վրա:

Տիեզերքի բոլոր գանձերը ծածկված են հող ստվերին տակ: Ծովերը ստվերներ են անհուն հարստությանց: Կյանքի հսկա մտածումները ծածկված են գանգերու

մեջ: Սուրը պատյան ունի: Վրեժը կաճի լռության ստվերներում մեջ: Սերը խորն է սրտերում: Կույսերը կճառագայթին սրսկապանների ետին: Օ՛, գեղեցկությունը՝ քողերու խորհրդավորությանը մեջ...

Աշխարհը ծածկված է անհունության ստվերով:

Ժամանակը մեծ ստվերն է սերունդների պատմության: